

Համարներկայ բոլորում ամենաճանր և նուաստացուցիչ հանգամանքն իսկապէս ոչ թէ այն է, որ իւր հաւատակիցները կամ արիւնակիցները բոլորովին անմեղ տեղն արիւն են թափում, այլ որ քրիստոնեայ աշխարհը կարող լինելով մի ակնարկութեամբ կոտորածներին վերջ տալ և մի քրիստոնեայ ժողովրդի կեանքը փրկել ու ապահովել՝ այդ չէ անում: Դնչու... որովհետեւ քրիստոնէութիւնը վերացել է նորա միջից և անունն է լոկ մնացել... Ծայդ անկարելի է. անկարելի է որ քրիստոնեայ անունն այդչափ նուաստանայ, որ մեր պաշտած զաղափարներն հոգի հաւասարութիւն: Զաղաքականութեան կանգնած հզօր ամբարտաւանքի ետեւ բարձրանում, զայրանում, դիզուում են ահա բարոյական անկեղծ ըզզացման, քրիստոնէական զգացման կոհակները: ազգերի խիղճը զարթել՝ որոտաձայն բողոք է բառնում—և արդեօք ամեն արգելք խորատակելով առաջ չի՞ դնայ և բռնաւորների բազուկը չի՞ սասանեցնի: Երէկ չէր, որ ուրիշ հարեան ժողովուրդներ նոյն վիճակի մէջ էին, մահուան գուռն հասած արգէն՝ երբ մի ողորմած ձեռք պարզուեցաւ հիւսիսից և արիւնուշտ դահլիճն ստիպուած էր կանգ առնել, իւր չար խորհուրդն անգործադիր թողնել: Դնչու և այժմ վերջին բոլորում չի պարզուի նոյն փրկարար, մահարգել ձեռքը... Դսկ եթէ ուշ լինի այլ ևս... եթէ փրկութեան աւետարներն բռն ամեն կեանք խաւարած և ամեն տուն աւերակի գտնեն՝ ամեն անգաստան չոր և անընդունակ նոր պտուղներ բերելու... Տես ինչ է ասում մեր հայրերի հին Աստուածը յուսակտուր մարգարէին. «Զոր օրինակ եթէ զբռնանք ձիւն ի մէջ ողկուղոց, և ասիցեն. մի՛ ապականել զգա, զի օրհնութիւն Տեառն գոյ ի դմա, այնպէս արարից վասն ծառային իմոյ, վասն որոյ ոչ կորուսից զամենեւեան»: մի՞թէ այս անգամ ոչ մի օրհնութեան ծիւղ նա իւր այգում պէտք է չպահի, այլ թոյլ պէտք է տայ, որ ամենքը կորուսուին... Աստուած զօրութեանց, զարձ, հայեաց յերկնից և տես, այց արա այգույս այսմիկ և զարման տար

ամա, զոր անկեաց աջ քո... «Բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»: ամէն:

Կ. Վ.



ԱՂՕԹՔԻ ՈՅԺԸ.

ԴՆՆՈՐԵՆԱՅ ԴՈՒ ՔԵՂ ԽՆՈՐԻ ԽՆՈՐ:

Գ. Թագ. Գ. 5.

Չեզանից ոմանք զիտեն, որ այս խօսքն առնուած է Սողոմոնի պատմութիւնից: Հինց որ նա ժառանգեց իւր հօր թագաւորութիւնը, անմիջապէս փառաւոր և խելացի անվհերութեամբ ոչնչացրեց հասարակական խաղաղութեան դէմ եղած բոլոր արգելքները: Ապա, երբ հասաւ նորա զահ բարձրանալու ժամը, նա արեւելեան ճոխութեամբ եկաւ Գաբաւոնի պալատը, ուր շատ և երկար ազօթքներից և հարիւրեզնեան զոհ մատուցանելուց յետոյ իւր թագաւորութեան ապագայի համար, որի դաշտերը և քաղաքները տեսնում էր այդ սուրբ սարից, հանգիստ առնելու քաշուեցաւ: Դսկ զիշերը նա երազ տեսաւ և իմացաւ, որ այդ իւր համար մի ցուցմունք էր:

Աստուած, Որին նա զոհեր մատուցեց, երեւաց և ասաց նորան. «Խնդրեմ դու քեզ խնդիր ինչ: Դսկ Սողոմոն, որի զիշերային տեսիլքների մէջ պատկերանում էին ցերեկուայ մոտանջութիւնները, խնդրեց Տիրոջ հետեւալը. «Պարգեւեմ ծառայի քում սիրտ լսելոյ և զատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարոյ և չարի»: 1

Սողոմոն դեռ ևս փոքր էր (հրէից պատմաբանների ասելով 15 տարեկան), երբ մի մեծ ժողովրդի թագաւոր դարձաւ: Նա խնդրեց Աստուծոյ շնորհը, որպէս զի կարողանայ արդարութեամբ կառավարել այդ ժողովուրդը: Եւ Աստուած, ընդունելով նորա խղճերը, տուաւ

Սողոմոնին նորա խնդրածից էլ աւելի: Սողոմոնը խնդրել էր իմաստութիւն, և Աստուած տուաւ նրան բացի իմաստութիւնից նաեւ զանձնր, երկար կեանք և յաղթական յաջողութիւններ:

Ինչո՞ւ Սողոմոնի աղօթքն Աստուծուն այդպէս հաճելի եղաւ:

Շատ, որովհետեւ Շորան հաճելի է ամեն մի անկեղծ աղօթք, և երկրորդ, որովհետեւ Նա բոլոր աղօթքներից աւելի սիրում է այն աղօթքները, որոնք բոլորովին ազատ են ետականութիւնից, որոնցից հեռացրած են «ես-ի» վերաբերեալ բոլոր մտքերը և թողնուած մի-միայն Շորան (Տիրոջ) և մեր մերձաւորներին վերաբերեալները: «Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ»: Արդե՞օք որ և է մարդու պատահել է ընդունել այս տեսակ առաջարկութիւն:

Դասական, միջնադարեան և յետագոյն պատմութիւնների մէջ յաճախակի յիշուում է, որ մարդիկ իրենց վաճառում էին սատանային, իւրաքանչիւր այդպիսի պատմութեան նպատակն է ցոյց տալ այն անկումն ու դառնութիւնը, որ յառաջանում է երկրայինը երկնքի գնով ձեռք բերելու ձգտումից:

Միդասի պատմութիւնը որը ցանկանում էր՝ ոսկի դառնար այն ամենը ինչի որ ձեռ տար, քաղցածութիւնից առաջացած մահուան տաղնապի մէջ ստիպուած եղաւ աղաչել, որ իրանից յետ առնուի այդ պարգևը: Տիտոնի պատմութիւնը, որ անմահութիւն էր խնդրում, բայց սարսափելի տանջանքներ կրեց, մինչև ազատուեցաւ իւր անմիտ խնդրի հետեանքից: Լիւդացւոց հովիւ Գիգէսի պատմութիւնը, որի մատանին նորան ցանկացած ժամանակ անտեսանելի էր դարձնում և այդպէս անմեղ հովուին մեղաւոր թագաւոր դարձրեց, կեղծ ցանկութիւնների կատարումից առաջացած չարչարանքներն ու սարսափը (գեղեցկութիւնը դառնում է անէծք և կործանում մէկին, խելքը հրապոյր և թակարդ է դառնում միւսի համար, կարողութիւնը՝ մահ և պատուհաս երրորդի համար)՝ բոլորը հետեւանք են դատարկ և անմիտ ցանկութիւնների:

Այո՛, բոլոր պարգևները, բացի երկնքի բարեհաճ պարգևներից, նման են ոսկու, որ փռու է փոխարկում: Տէրն է հիւսում մեր բախտի բարակ թելը և հիւսում է մեր բարեխառութեան համար, իսկ մեր անմտութիւնը փչացնում է Շորա ծրագիրը:

Մեր խնդրուածքների կատարումն միշտ մեր անմիջական բախտաւորութեան չէ ծառայում: Հերա աստուածուհու քրմուհին խնդրում է աստուածուհուց նորա օրհնութիւնը իւր երկու պատուական որդոց համար, և յաջորդ առաւօտ տեսաւ նրանց պառկած տաճարի մէջ ժպիտը շրթունքներին, բայց մեռած:

Բոլոր այդ պատմութիւնները տխուր փորձի արձագանք են և հեթանոսական ձևերով արտայայտուած ս. Գրքի դասեր, թէ «Զվելինն խորհեցարուք»¹ Այդ բանի մէջ ևս սրբազան պատմութիւնը համերաշխ է ընդհանուր պատմութեան հետ:

Հռովմայեցւոց կայսր Տիրերիոսը, որ կեղեքում էր երկիրը իւր շռայլ և անառակ ցանկութեանց բաւականութիւն տալու համար՝ յայտնի է իւր սեպհական հրապարակական խոստովանութեամբ, իրրեւ ամենաթշուառ մի մարդ: Արդիւրահմանը, որ բախտաւոր էր աշխարհում և ճարպիկ պատերազմի մէջ, որից երկիւղ էին կրում թշնամիները և որին աստուածացնում էին բարեկամները, ասում է իւր յիշատակարաններում, թէ իւր ամբողջ կեանքի մէջ կարող է հաշուել միայն տասն և չորս երջանիկ օրեր: Հրէից թագաւոր Սողոմոնը, գեղեցիկ էր տեսքով և յաջողակ ամեն բանի մէջ, որին սիրում էին ամէնքը և որի անունն ամբողջ արեւելքում կապուած է կախարդութեան և կատարեալ պերճութեան հետ, թէև այս մասին ոչինչ չէ ասում, բայց նորա կրճքից դուրս թաւայն տխուր և ծանր հառաչանքը, որի նմանը հազիւ թէ արտասանել է երբեք հիասթափուած մարդկութիւնը. «Ունայնութիւն ունայնութեանց—ամենայն ինչ ընդունայն է»²:

1. Առ Կողոսսացիս գլ. Գ. 2: 2. Ընդէսիսստեղծ գլ. Ա. 2:

Նոյն իսկ աշխարհական մարդիկ եկել են նոյն եղբայրացութեան, նրանցից մէկը՝ մի բանաստեղծ, ասել է. « Ձկայ աշխարհի տուած մի ուրախութիւն, որ հաւասար լինէր նոցա մի և նոյն ժամանակ ասածին: Այսպէս ուրեմն՝ խելօք չէ նա, ով խիստ կապուած է երկրաւորի և նորա բոլոր գուարժութեանց հետ, թէպէտ ի հարկ է ոչինչ վատ բան չէ աղօթել Աստուծուն, որ օրհնէ մեր անմեղ ցանկութիւնները, և մինչև անգամ եթէ Տէրը իւր գերազոյն իմաստութեամբ չլսէ ևս մեր աղօթքները, այնու ամենայնիւ մեր ցանկացածի փոխարէն կը վարձատրէ մեզ մի աւելի լաւ և մեղ համար աւելի օգտակար բանով. « խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւնն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ: »¹ Տէրն իւր որդկերանցից ոչ ոքին չէ մերժում երկրաւոր բախտաւորութեան աւելի բարձր և ազնիւ տարրերն ևս: Դուք կարծում էք, թէ այդ գովական առաջարկութիւնը Սոլոմոնին ամբողջ մարդկութեան սիրելիին դարձրեց. և կը ցանկանայիք դորա համար, որ Տէրը նոյնն անէր և ձեզ: Եղբայրներ, այդ առաջարկութիւնը ձեզ ևս եղած է, կարո՞յ կայ և կրկնի:

Մենք երբէք չենք ծնունդ առանց կոչման: Դժբախտութեան, աղքատութեան և ողնացման համար չէ տուել Տէրը մեզ այդքան ընդունակութիւններ, այլ բախտաւորութեան, անմահութեան և Նորա հետ կեանք ունենալու համար:

Ճշմարիտ է, որ հազարաւոր մարդիկ մեղանշում են և հիւժում, բայց չէ՞ որ այդ իրենց մեղքիցն է: Տէրն այս տխուր վիճակի համար չբերեց մեզ աշխարհ, որ առատ է գեղեցիկ թաւմ օդով և արևի ճառագայթներով, և ոչ նորա համար, որ շրջապատէ մեր մանկութիւնը քնքշութեամբ և մեր երիտասարդութիւնը հոգսերով, կամ որպէս զի մեռնէր Քրիստոս և իջնէր ս. Հոգին: Եւ եթէ բոլոր մարդիկ շնորհներ չեն ստանում, իրրե ամենա-

հարուստ և անզին օրհնութիւն, նորանից չէ, որ Տէրը չէ կամենում տալ այն մարդկանց, այլ նորանից, որ մարդիկ չեն խնդրում Տիրոջից:

Ս. Թակօր առաքեալը ասում է. « Ոչ ունիք, վասնզի ոչ խնդրէք, խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք: »¹ Եւ սակայն, մեզնից իւրաքանչիւրին Տէրն ասում է. « խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: »² Մեզնից իւրաքանչիւրի համար ճշմարիտ խոստում է. « Զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ տացէ ձեզ: »³

Այո՛, ձեզնից նրանք, որոնք կամենում են, կարող են աշխատել գանելու երկնքի արքայութեան զանձերը, և այդպէս ձեռք բերել նրանց:

Եանդուզն, անհաւատ, կամակոր և բժբոստ մարդիկ չեն կարող մտնել Աստուծոյ արքայութիւնը, բայց այդ արքայութիւնը բաց է նրանց առջև, որոնք կամենում են դործ դնել անկեղծութեան և աղօթքի ոսկէ բանալիները: Այսպէս ուրեմն, փորձե՛ք այդ մտքերը և տեսնե՛ք, թէ որքան նրանք ճշմարիտ են, ինչպէս երկրաւորի, այնպէս և երկնաւորի վերաբերմամբ:

Ես կասեմ, որ մինչև անգամ երկրաւոր բաների համար Տէրն ասում է ձեզնից իւրաքանչիւրին. « խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: » Միթէ չէ՞ք տեսնում՝ այն հասարակ բանը, որ եթէ կամենաք, ձեր կեանքը արդարութեամբ առաջ կը դնայ: Միթէ չէ՞ք տեսնում, որ հասակաւոր մարդկանց թէ երեսաների իւրար մէջ եղած գլխաւոր զանազանութիւնը կազմում է ոչ այնքան ոյժի տարբերութիւնը, որքան մտածողութեան ոյժը, նպատակի պարզութիւնը, բնաւորութեան վճռականութիւնը:

Ձեր կեանքում ամեն օր դուք լսում էք. « խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: » իւրաքանչիւր օր բաց է անում ձեր առաջ իմաստութեան անզին փորձը, բայց եթէ խուսափում էք նոցանից, դորանով արդէն յու-

1. Թակ. Թուղթ Կաթուղ. գլ. Դ 2, 5:

2. Գ. Թագ. III—5: 3. Թովման. Ժ. 2—25:

սահառութեան մէջ էք ձգում ձեզ: Աստուածանից պարգևներ խնդրելը հասարակ խնդիր չէ: և ով կամենում է որ իւր աղօթքը լսելի լինի, պէտք է մաքուր սիրտ ունենայ. այն ժամանակ անկասկած կըստանայ այն միջոցները, որ Աստուած նշանակում է: Եթէ հակառակը լինէր, այսինքն եթէ յանցանքը լոկ ցանկութեամբ առաքելութիւն դառնալ կարողանար, եթէ ծուլութիւնը մի գիպելուց կարողանար իւրացնել աշխատանքի շնորհները, այն ժամանակ աղօթքը կըփչացնէր աշխարհը: Բայց Տէրը ոչ միայն չէ լսում կեղծ աղօթքը, այլև աղօթք իսկ չէ կամենում համարել ծոյլի երկարաբանութիւնները կամ կեղծ բարեպաշտութեան զեղմունքները: Գործունէութիւն, եռանդ, հաստատակամութիւն— ահա այն փորձաքարերը, որոնք զտում են անկեղծութեան մաքուր ոսկին:

Կռապաշտները նմանապէս ունեցել են ինչ ինչ հասկացողութիւն ճշմարտութեան մասին: «Հաստատամիտ մարդու համար» ասում է պարսկական մի բանաստեղծ, «պատրաստ են օրհնութեան անթառամ պսակներ»:

Հռովմէական ամենազօրեղ կայսրներից մէկըն ասել է մահուան անկողնի մէջ այս մեծ խօսքը. «laboremus» — աշխատենք: Աշխատանքը մեծ բան է: Բայց եթէ մենք «laboremus»-ի վրայ աւելցնենք «oremus» — աղօթենք, այն ժամանակ անյաղթելի կը լինենք:

Եթէ ձեզանից որ և իցէ մէկն ունի հարուստ մեռնելու թշուառ ձգտումը, կամ դէպի իշխանութիւն է ուղղել ուշն ու միտքը, կասկած չկայ, որ կը հասնէ դորան: Պէտք է յիշել, որ թէպէտ բնութիւնը առատութեամբ աալիս է մեզ իւր պարգևները, բայց միևնոյն ժամանակ ամուր պահում է իւր ձեռքում: Որպէս զի կարելի լինի ստանալ այդ պարգևները, ամենից առաջ դուք պէտք է իսկական աշխատութեամբ բանաք բնութեան ձեռքերը: Ուրիշ խօսքով, ինչ որ դուք կամենում էք ունենալ՝ վճարեցէք զինը և կը ստանաք ձեր ցանկացածը: սակայն պէտք է զիտենալ, որ եթէ դուք կամենում էք ստանալ աստիճան-

ներ, հարատւութիւն, փառք, հանգստութիւն առանց աստուածային օրհնութեան, այն ժամանակ Սողոմի խնձորներ կը լինին նոքա ձեզ համար, լիքը մոխրով:

Ղերցնենք հետեւեալ օրինակը: Դուք ուսումնարանի մէջ էք. ձեզ տրուած են որոշեալ պարապմունքներ և խնդիրներ, որոնց կատարման համար ձեզ խոստացուած են որոշ պարգևներ: Ձեր պարտքն ունենում է այդ դէպքում նոյն դրդիչն ինչ որ ձեր շահը և դուք գործելով ստանում էք բաւականութիւն գործելու հնարաւորը: Ձեր շահն է ջանալ սովորել: Եթէ դուք ի դուր տեղը կորցնէք ձեր աշակերտական պարապմունքների շրջանը, այդ ձեզ կարող է պատճառել մի ամբողջ տարուայ վիշտ և հոգս: Ձեր կորցրած իւրաքանչիւր ուսումնական տարին կարող է յետ մղել տասնեակ տարիներով ձեր յոյսերի իրագործումը: Ձեր անգործ անցրած ուսումնարանական կեանքին կյաջորդէ հասակաւոր մարդու անօգուտ կեանք: Ձեր պարտքն է սովորել, որովհետև դորանից են կախուած ձեր ծնօղների միթաւրութիւնը, ձեր ուսուցիչների յոյսերը, ուսումնարանի փառքը և Աստուծոյ յայտնի ցուցմունքների կատարումը: Այդ ամենից յետոյ, եթէ ոչ շահը և ոչ էլ պարտքը առաջ չեն մղում ձեզ, այն ժամանակ դուք ողորմելի աւարածներ էք, և ուրեմն ձեզ ղեկավարում են ձեզ շրջապատող պայմանները:

Ծուլութիւնը, անհոգութիւնը, յուսահատութիւնը, որ չեն կարող են ասում հպարտութիւնը, որ ասում է՝ չեմ ուղղում, նման են Լուտոս ծաղկի զիւթիչ բաժակին, որ դէպի ապականութիւն են տանում: կամ յուշկապարիկի երգերին, որոնք տանում են դէպի մահ և նաւաբեկութիւն ամայի ափի վրայ: Այո, այդ ամենը աւելի կամ պակաս չափով կարող է տեղի ունենալ, և որպէս զի կարելի լինի դուրս դալ այդպիսի սարսափելի դրութիւնից, մենք նախ և առաջ պիտի պարզենք մեզ մեր կեանքի նպատակը, դէպի որը մենք պիտի գնանք ճշմարիտ ճանապարհով, խոնարհութեամբ և համբերութեամբ: Իւրաքանչիւր

մարդ, որ զինուում է վատ ազդեցութիւնների դէմ, կը դործէ և կը խնդրէ Աստուծուն՝ օրհնել և օգնել իրեն, այդպէս եթէ նա կամենում է, կարող է յաղթութիւն տանել:

Որքան ցանկալի է ունենալ անկեղծութիւն, համարձակ վճռականութիւն, ազնիւ մտադրութիւն, և ամենից աւելի հեղութիւն, որի հետ կապուած է միշտ մարդու իսկական արժանաւորութիւնը: Այն ժամանակ անկասկած իւրաքանչիւրը կ'զգար, որ մինչև անգամ աշխարհային յառաջադիմութեան համար նոքա անսահման չափով աւելի գնահատելի են, քան անապարձ մօքի փայլը: Պարկեշտութիւնը աւելի օրհնուած է Տիրոջից, աւելի սիրելի է մարդկանց և աւելի գնահատելի մինչև անգամ՝ ամբողջ աշխարհի համար, քան թէ մանր բաների մէջ հեռատես մարդու սառն անձնապատանութիւնը և ազէտի խակ ինքնավստահութիւնը, որ նա գիտութեան տեղ է ծախում:

Այսպէս ուրեմն, կարելի է ասել, որ անկեղծութիւնը, ազնիւ մտադրութիւնը, խոնարհութիւնը և պարկեշտութիւնը եթէ միշտ չեն կարող ունենալ ակնյայտին յաջողութիւն, այնուամենայնիւ նոքա բովանդակում են առնուազն իրենց մէջ սուրբ զղաստութիւն, ներքին բաւականութիւն, պատրաստակամութիւն մերձաւորին օգնելու՝ յատկութիւնների որոնք աւելի թանկագին են քան ոսկին: Ուստի և ամենամատաղ և անվստահ տղային ևս կարելի է ասել, իմ որդի, մի կասկածիր, այլ միայն հաւատա: Տէրն ասում է. «Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ», խնդրիր հաւատով, մի երկմտիր, և կատարիր քո պարտքը, և այն ժամանակ դու կարեւորութիւն չես ունենալ նախանձելու ուրիշ մարդկանց պարզեցնելին: որովհետեւ դու կատարեալպէս դո՛ւ վիճակի մէջ կլինես: Հաստատ կերպով փափագեցէ՛ք, սիրելիքս, ամենալաւ պարզեցնել և կտանաք: Տէրն ասում է ձեզ սակայն աւելի մեծ հաստատութեամբ. «Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ»: Սիրում ես դու անկեղծութիւն՝ խնդրիր նորան:

ցանկացիր, և դու կը լինես անկեղծ: Սիրում ես անարատութիւն՝ խնդրիր նորան, ցանկացիր և դու կը լինես անարատ: Թարգում ես բարոյական ազնւութեան բարձր զաղափարը, խնդրիր, ցանկացիր, և դու կը լինես ազնիւ: Եթէ մի հրեշտակ իջնէր և առաջարկէր ձեզ այն, ինչ որ դուք մաքուր սրտով ցանկանում էք՝ հաւանական է, որ չէիք մտածի մերժել, մանաւանդ որ հակառակ ձեր ցանկութեան այդ ապերախտութիւն և անզգայութիւն կը լինէր: Արդեօք աւելի՞ անզգայութիւն չէ մերժելը, երբ Տէրն է ձեզ առաջարկում անմահութիւն, երանութիւն և անթառամ պսակ: Գուցէ դուք այլեւ չէք ըզգում ցանկութիւն դէպի աստուածային օրհնութիւնները, նման այն արեւցողին, որ սիրում է միայն այն, ինչ որ նրան քայքայում է և ատում է աղբիւրի մաքուր ջուրը: Տէրը կը վերականգնի ձեր մէջ բարոյական և հոգեոր ճաշակ, և ոչ եղծուած: Չեր մանկութիւնից ի վեր ծա ասել է և այժմ էլ կրկնում է. «Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ»: Ծա ասում է այդ խօսքերը Սողոմոնին տեսիլքի մէջ, Ծա ասում է և մեզ իւր որդի Յիսուս. Զրիստոսի միջոցով. «Խնդրեցէ՛ք, և տացի ձեզ, հայցեցէ՛ք և գտչիք, բաղխեցէ՛ք, և բացի ձեզ: Զի ամենայն որ խնդրէ՛, առնու, և որ հայցէ՛, գտանէ, և որ բաղխէ՛, բացցի նմա»¹:

Դ. Ս.



1. Մատթ. Է-7, 8:

* Թարգմ. Փարբարի „Въ снѣ могомъ Юности“ գրքից, С.-Пет. 1895.